

Մ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ, Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դարեր), Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 2005, 590 էջ:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ լույս է տեսել պատմագիտության դոկտորներ, պրոֆեսորներ Մ. Մուրադյանի և Է. Մինասյանի «Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դարեր)» ուսումնական ձեռնարկը, որն առաջին հերթին նախատեսված է պատմության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետների ուսանողության, պատմաբանների, միջազգայնագետների համար:

Երկար տարիներ սույն առարկան դասավանդվում է պատմության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետներում և չափազանց անհրաժեշտ է ուսանողությանը մասնագիտական գիտելիքներ տալու առումով: Հետևաբար, նման ձեռնարկի հրատարակումը, որն, ի դեպ, հայերենով առաջիններից է, կոչված է լրացնելու գոյություն ունեցող բացը: Գրքի լույսընծայումը կարևոր է նաև նրանով, որ հետխորհրդային շրջանում՝ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, անհրաժեշտություն առաջացավ միջազգային դիվանագիտական բազմաթիվ հարցեր քննարկել ու ներկայացնել միանգամայն այլ տեսանկյունից, փորձել նորովի գնահատել ու վերլուծել այս ամենը:

Ռուսաստանը, լինելով մեծ տերություն, իր մասնակցությունը և որոշակի դիվանագիտական դերակատարությունն է ունեցել միջազգային հարաբերություններում հատկապես XVIII-XIX դարերի ընթացքում, երբ աշխարհում տեղի էին ունենում արմատական տեղաշարժեր, ձևավորվում էին ուժերի, ռազմաքաղաքական դաշինքների նոր հարաբերություններ: Հեղինակներն իրենց առջև նպատակ են դրել ամաչառ կերպով ցույց տալ նշյալ դերակատարությունը:

Աշխատանքը բարկացած է ներածու-

թյունից, 3 բաժնից, որոնցից յուրաքանչյուրն ունի մի շարք գլուխներ, և եզրակացությունից:

Ռուսաստանը հատկապես XVIII-XIX դարերում իրականացրել է ակտիվ դիվանագիտական քաղաքականություն, ձեռք բերել հարուստ փորձ, որի ուսումնասիրումը, դասեր քաղելը կարող է շատ օգտակար լինել: Ռուսական կայսրության երկուհարյուրամյա դիվանագիտությունը անցել է մեծ փորձություններով, դիմացել մեծ տերությունների դիվանագիտական խաղերին և նվաճել իր արժանի տեղը համաշխարհային դիվանագիտության բեմահարթակում: Այդ իմաստով իրավացի են ձեռնարկի հեղինակները, երբ գրում են, որ առանց ռուսաց դիվանագիտության պատմության հիմնարար իմացության և ուսումնասիրության, համաշխարհային դիվանագիտության վերաբերյալ մեր պատկերացումները, առավել ևս գիտական գնահատականները կլինեն թերի, և անհնարին կդառնա համակողմանիորեն քննախոսել որևէ հիմնահարց:

Հարկ է նշել նաև, որ հեղինակները քաջատեղյակ են հսկայածավալ աղբյուրագիտական աշխատանքների և ռուսաց դիվանագիտությանը նվիրված գիտական աշխատությունների, առանց որոնց հնարավոր չէ լիարժեք պատկերացում կազմել և գիտական բարձր մակարակով ներկայացնել հիմնահարցը:

Աշխատության առաջին բաժնում ներկայացված են Ռուսաց կայսրության արտաքին քաղաքականության գլխավոր ուղղությունները, որ իրականացվել են XVIII դարի ընթացքում: Իսկ դրանք ընդգրկում են այնպիսի հարցեր և ժամանակաշրջան, ինչպիսիք ռուսաց դիվանագիտությունն է Հյուսիսային և Յոթնամյա պատերազմների տարիներին, ինչպես նաև Ռուսաստանը կայսրություն նաշակելը և այլն.

Հետաքրքիր է ոուսաց դիվանագիտութ-
յունը պալատական հեղաշրջումների ժա-
մանակաշրջանում խնդրի մեկնաբանումը,
որում հատկապես կարևոր տեղ է տրված
«Ավստրիական ժառանգության» հիմնա-
հարցի լուսաբանմանը:

Առանձին հետաքրքրություն են ներ-
կայացնում կայսերական դիվանագիտու-
թյունը լուսավորյալ միապետուհու՝ Եկա-
տերինա Երկրորդի թագավորության ժա-
մանակաշրջանում խնդիրների լուսաբա-
նումը, որում հատկապես պարզաբանվում
են այնպիսի հարցեր, ինչպիսիք են ուս-
թուրքական պատերազմները, միապետու-
հու վարած քաղաքականությունը ԱՄՆ-ի
անկախության հռչակման և Ֆրանսիական
մեծ հեղափոխության տարիներին, ինչպես
նաև բազմաթիվ այլ հետաքրքիր հիմնախն-
դիրներ:

XIX դարի առաջին քառորդում աշ-
խարհում տեղի ունեցող իրադարձություն-
ների շարքում հատկապես առանձնանում է
1812 թ. Հայրենական պատերազմը և Ալեք-
սանդր Առաջին կայսր-դիվանագետի վա-
րած քաղաքականությունը Տիլզիտում, Էր-
ֆուրտում, ռուսական բանակի արտասահ-
մանյան արշավանքի տարիներին և, հատ-
կապես, Վիեննայի վեհաժողովում և «Սըր-
բազան դաշինքի» ձևավորման գործում:

Հեղինակների ուշադրությունից դուրս
չի մնացել այնպիսի կարևոր հարց, ինչպի-
սին Արևելյան ճգնաժամն է, Մերձավոր
Արևելքի հիմնախնդիրը, դրանց բննարկու-
մը Փարիզի վեհաժողովում և այլն:

Գրքում առանձին տեղ է տրված մեր
խնդիրներին վերաբերող դիվանագիտա-
կան գործունեության լուսաբանմանը, ինչ-
պիսիք են Սան-Ստեֆանոյի և Բեռլինի վե-
հաժողովները, որոնցում քննարկվել է աշ-
խարհին վաղուց արդուց հայտնի Հայկա-
կան հարցը: Հեղինակները ներկայացրել
են ռուսաց դիվանագիտության և Հայկա-

կան հարցի միջազգայնացման խնդիրը,
որն ամենաշատն է հետաքրքրում հայ ըն-
թերցողին: Բազմաթիվ օրինակները մեկ
անգամ ևս վկայում են, թե ինչպիսի տեղ էր
գրավում Հայկական հարցը միջազգային
դիվանագիտության պատմության մեջ,
ինչպես է այն առաջացել, ինչ մոտեցում-
ներ են ունեցել մեծ տերությունները և, ա-
ռաջին հերթին, Ռուսական կայսրությունը
այդ հարցի նկատմամբ և, որ անչափ
կարևոր է, ինչպիսի վախճան է ունեցել
այդքան չարչրկված Հայկական հարցը, և
ինչպիսին է այն այսօր:

Խնդրի նկատմամբ նման մոտեցումը
ավելի մեծ հետաքրքրություն է առաջաց-
նում հայ ընթերցողի, ուսանողության շրջա-
նում, որն ավելի գիտական պատկերացում
է կազմում մեր ժողովրդի համար անչափ
կարևոր հարցի մասին, տեսնում նրա զար-
գացման տարբեր փուլերը և անում անհրա-
ժեշտ հետևություններ Հայկական հարցի
վերաբերյալ:

Անշուշտ, հեղինակներ Մ. Մուրադյա-
նը և Է. Մինասյանը կատարել են շնորհա-
կալ և ուսանողության համար օգտակար
աշխատանք՝ նրանց սեղանին դնելով
կարևոր մի աշխատություն, որում առաջ
քաշված հարցերը հույժ արդիական են:

Մյուս կարևոր հետևությունն այն է, որ
հեղինակներին հաջողվել է ցույց տալ, որ
Ռուսական կայսրությունը իր երկուհարյուր-
ամյա դիվանագիտական պատմության ըն-
թացքում վարել է մեծ տերություններին
բնորոշ քաղաքականություն, գրավել իր
արժանի տեղը համաշխարհային կարևոր
իրադարձություններում, իր որոշակի ներդ-
րումը կատարել այդ խնդիրների լուծման
անչափ բարդ գործում:

Գիրքը գրված է գիտական բարձր մա-
կարդակով և բարեխղճությամբ:

Հ. Մ. ԱՐԲՆՎԱՅԱՆ